ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02» մարտի 2026թ. ՆՄՈ/ Ա 051/58-Ա

ք. Արմավիր

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 177-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի և «Քրոու Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված 2025 թվականի փետրվարի 10-ի թիվ ՀՀԱՄԷԱԾԾՁԲ-25/03 պայմանագիրը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ներքին աուդիտի ծառայության 2026 թվականի տարեկան ծրագրի կատարումն ապահովելու նպատակով իրականացնել աուդիտորական առաջադրանքներ՝ համաձայն N1 հավելվածի:

2. Աուդիտորական առաջադրանքների իրականացումը պատվիրակել «Քրոու Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ձևավորված աշխատանքային խմբին՝ համաձայն N2 հավելվածի:

3. Աուդիտորական առաջադրանքներն իրականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների և կազմակերպությունների ներքին հսկողության տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման, օրենքների, այլ իրավական ակտերի և այլ պայմանների համապատասխանության վերաբերյալ հավաստիացում տրամադրելու նպատակով:

4. Աուդիտի ենթարկվող միավորների ղեկավարներին՝ աուդիտորական առաջադրանքների իրականացման գործընթացն ապահովելու նպատակով աջակցել աուդիտորական խմբի անդամներին, տրամադրել պահանջվող փաստաթղթերը, դրանց պատճենները, ներկայացնել տեղեկանքներ, պարզաբանումներ և բացատրություններ:

5. Աուդիտորական առաջադրանքի ընթացքում թույլատրել աուդիտորական խմբի անդամներին օգտվել էլեկտրոնային տեղեկատվական համակարգերից և «Պետական և

0901 ք. Արմավիր, Արովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված փաստաթղթերից և նյութերից:

6. Աուդիտորական առաջադրանքների կատարման ընթացքում աշխատանքների պատշաճ կազմակերպումն ապահովելու և այդ ուղղությամբ համակարգման լիազորությունները վերապահել (աուդիտի որակավորմամբ) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Արայիկ Հակոբյանին:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 29028401 79 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**